ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
«ԶԱՐԻՇԱՏ (ԱՐԱՄ) ՄԱՐՏԻՆԻ ՄԿՐՏՉՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ք.Արմավիր,Շահումյան 3
☏ (0-237) 2-35-60
E-mail: armavir.med@gmail.com

08-246/320 «01» ապրիլի 2024թ.

«Կվանտա» ՍՊԸ-ի տնօրեն
Կառլեն Բաղդասարյանին

ԾԱՆՈՒՑՈՒՄ
պայմանագրի միակողմանի մասնակի լուծման մասին

Հարգելի պարոն Բաղդասարյան

2025թ. մարտի 25-ին մեր կողմից պատվիրվել էր «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի ԲԿ» ՓԲԸ-ի և «Կվանտա» ՍՊԸ-ի միջև 2024թ. դեկտեմբերի 23-ին կնքված ՆՀՄՄԱԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-06/25-7 ապրանքի մատակարարման պայմանագրի (այսուհետև՝ պայմանագիր) 51-րդ չափաբաժնով նախատեսված 5մլ ներարկիչ 7200 հատ:

2025թ. մարտի 27-ին Դուք էլեկտրոնային փոստի միջոցով պատասխանել եք, որ 5մլ ներարկիչների մատակարարումը դարձել է անհնար «Կվանտա» ՍՊԸ-ի համար և խնդրել միակողմանի լուծել պայմանագիրը տվյալ չափաբաժնի մասով, ինչպես նաև առ 31.03.2025թ. վերոհիշյալ ապրանքի մատակարարումը չի կատարվել, խախտվել է պայմանագրով սահմանված մատակարարման ժամկետները: Համաձայն պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետի այն համարվում է պայմանագրի էական խախտում: Հիմք ընդունելով պայմանագրի 2.1.7 կետը՝ «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի ԲԿ» ՓԲԸ-ն 2025թ. ապրիլի 2-ից միակողմանի մասնակի լուծում է պայմանագիրը:

Առաջարկում եմ 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի ԲԿ» ՓԲԸ-ի ԱրարատԲանկ ԲԲԸ-ում ունեցած 1510040627260100 հաշվեհամարին փոխանցել չմատակարարած մասի պայմանագրի կատարման և որակավորման ապահովման գումարները՝ համապատասխանաբար 111945 և 167918 ՀՀ դրամ:

Չափաբաժնի համարը	Անվանումը	Պայմանագրով նախատեսված քանակը	Առ 31.03.2025թ. չմատակարարված քանակը	Ընդամենը գնման գինը	Չմատակարարված մասի գնման գինը	10%	15%	Ընդամենը
51	ներարկիչներ	144000	124800	1291680	1119456	111945	167918	279863

Տեղեկացնում եմ, որ եթե մինչև 2025թ. ապրիլի 8-ը ներառյալ վճարումը հաստատող փաստաթղթերը ներկայացվեն, ապա Ձեր Ընկերությունը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Տնօրեն՝ Հ. Հովհաննիսյան

Կատարող՝
Գնումների համակարգող
Ա. Նավասարդյան
0933-33-10-30